ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
**Պ Ա Տ Գ Ա Մ Ա Վ Ո Ր**

---

Հայաստան, 0095, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 19 շենք

irina.gasparyan@parliament.am, Հեռ.՝ +374 11 51 32 49

ք.Երևան
02.10.2024թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Պարոն Սիմոնյան,

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասի, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ հոդվածի 1-ին և 67-րդ հոդվածի 1-ին մասի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», **«Նույնականացման քարտերի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հանրակրթության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին»** օրենքների նախագծերը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն գրությանը կցվում են՝

ա) նախագծերը, (հիմնական զեկուցող՝ Իրինա Գասպարյան)

բ) օրենքի նախագծերի ընդունման հիմնավորումը,

գ) գործող օրենքների փոփոխվող և լրացվող հոդվածների մասին տեղեկանքները:

Խնդրում եմ օրենքի նախագծերը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ՝ ИРИНА ГАСПАРЯН

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
# «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

## 1.Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Մինչև 2004 թվականը երեխայի ծննդյան գրանցման ակտի մեջ երեխայի ազգության գրառման համար սյունյակ նախատեսված չի եղել:
Սակայն 2004-2021 թվականներին «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում, նաև 2021-ին ընդունված «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ծննդյան ակտային գրանցման մեջ նշվում է նաև երեխայի ազգությունը:
Համաձայն նշված նորմի. «երեխայի ազգությունը գրառվում է՝
1) ծնողի (ծնողների) ազգությանը համապատասխան, եթե երեխայի ծնողները ունեն միևնույն ազգությունը.
2) դիմումում նշված ծնողներից մեկի ազգությամբ, եթե երեխայի ծնողները ունեն տարբեր ազգություն:»:
Իսկ օրենքի 30-րդ հոդվածի 1-ի կետի 1-ի ենթակետի համաձայն՝ երեխայի ծննդյան վկայականում լրացվում է նաև ազգության վերաբերյալ տեղեկությունը՝ ծննդյան ակտային գրանցմանը համապատասխան:

Եթե մինչև 16 տարեկան երեխայի մոտ ազգության վերաբերյալ գիտակցումը կարող է դեռևս ձևավորված չլինել, ապա նորածնի մոտ այն իսպառ բացակայում է:
Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ 16 տարին լրացած երեխան անձնագիրը ստանալիս կարող է իր ազգությունը նշել ըստ ցանկության, սակայն նորածին երեխային այն պարտադրում են:

Հետևաբար, երեխայի ծննդի բոլոր ակտերում երեխայի ազգությունը նշելը դառնում է անիմաստ, խախտում է երեխայի իրավունքը, հակասում միջազգային իրավունքի դրույթներին, ըստ որի. «Երեխայի ազգությունը որոշվում է ծնողների ազգությանը համապատասխան: Եթե երեխայի ծնողների ազգությունը տարբեր է, ապա այն որոշվում է երեխայի ցանկությամբ իր հոր կամ մոր ազգությանը համապատասխան՝ նրան անձնագիր կամ անձը հաստատող փաստաթուղթ տրամադրելիս:»:

Առկա իրավական կարգավորումները առօրյա կյանքում խնդիրներ են առաջացնում նաև առաջին դասարանը համալրելիս այն երեխաների համար, որոնց ծնողներից մեկը ազգությամբ հայ չէ: Բանն այն է, որ ՀՀ-ում դպրոց ընդունելիս, եթե ծննդյան

վկայականում նշված է երեխայի ազգությամբ հայ լինելու հանգամանքը, արդեն իսկ նա պետք է հաճախի հայկական ուսուցմամբ դասարան: Մինչդեռ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 26-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝

«Ծնողներն իրենց մանկահասակ երեխաների համար կրթատեսակ ընտրելու գործում ունեն առաջնության իրավունք:», այսինքն երեխայի ծնողները իրավունք ունեն ընտրելու երեխայի ուսուցման լեզուն:

Նշված դեպքերում ծնողները դիմում են երեխայի ազգությունը փոխելուն՝ որպեսզի օգտվեն իրենց վերոնշյալ իրավունքից, ինչն էլ անիմաստ է դարձնում երեխայի ծննդի բոլոր ակտերում երեխայի ազգությունը նշելը :

**2.Առաջարկվող կարգավորման բնույթը**

Նախագծերով.

1) Երեխայի ծննդյան ակտային գրանցումից և ծննդյան վկայականից հանվում է ազգությունը նշելու պահանջը: Փոխարենը անձի անձնագրում և նույնականացման քարտում ազգության մասին նշումը դառնում է պարտադիր:

2) ուժը կորցրած է ճանաչվում օրենքի 28-րդ հոդվածի 4--րդ մասը՝ դրա փոխարեն նախատեսելով հետևյալ իրավական կարգավորումը. «Երեխայի ազգությունը որոշվում է ծնողի (ծնողների) ազգությանը համապատասխան, եթե երեխայի ծնողները ունեն միևնույն ազգությունը:

Երբ ծնողները տարբեր ազգություն ունեն, երեխան իր ազգությունը ընտրում է անձը հաստատող փաստաթուղթ կամ անձնագիր ստանալիս՝ հոր կամ մոր ազգություններին համապատասխան,

3) մինչև 16 տարեկան երեխայի անձնագրում լրացվում են ծնողների մասին տվյալները (անունը, ազգանունը, ազգությունը),

4) ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը) առաջնային իրավունք կստանա ընտրելու իր մանկահասակ երեխաների կրթատեսակը և ուսուցման լեզուն,

5) սահմանվում են ազգականների և մերձավոր ազգականների հասկացությունները:

**3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը**

Նախագիծը մշակվել է ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Իրինա Գասպարյանի կողմից

**4.Ակնկալվող արդյունքը**

Նախագծերի ընդունման արդյունքում երեխայի ծննդյան ակտային գրանցումից և ծննդյան վկայականից կհանվի ազգությունը նշելու պահանջը: Դրա փոխարեն անձի անձնագրում և նույնականացման քարտում ազգության մասին նշումը կդառնա պարտադիր: Դրանով իսկ տարբեր ազգության ծնողներից կազմված ընտանիքները հնարավորություն կունենան իրացնելու երեխաների ուսուցման լեզվի ընտրության իրենց իրավունքը և նրանց ուսուցումը կազմակերպելու նախընտրած լեզվով:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

# «ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Նույնականացման քարտերի մասին» 2011 թվականի նոյեմբերի 30-ի ՀՕ-286-Ն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետից «՝ քաղաքացու կամ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացուցչի ցանկությամբ» բառերը հանել:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## Օ Ր Ե Ն Ք Ը

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» 2011 թվականի նոյեմբերի 30-ի ՀՕ-287-Ն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) 5-րդ կետից «՝ քաղաքացու կամ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացուցչի ցանկությամբ» բառերը հանել.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետ.

«7) մինչև 16 տարեկան երեխայի անձնագրում՝ ծնողների մասին տվյալները (անունը, ազգանունը, ազգությունը):»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## Օ Ր Ե Ն Ք Ը

# «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Հանրակրթության մասին» 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 16-րդ և 17-րդ կետերով.

«16) **ազգականներ**՝ ազգակցական կապի մեջ գտնվող և մինչև նախապապը կամ նախատատն ընդհանուր նախնիներ ունեցող անձինք: Սույն օրենքի իմաստով՝ անձի հետ ազգակցական կապի 1-ին աստիճանի մեջ են անձի զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները: Անձի հետ ազգակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ են ազգակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք, ինչպես նաև վերջիններիս հետ ազգակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք: Անձի հետ ազգակցական կապի մինչև 3-րդ աստիճանի մեջ են ազգակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ գտնվող անձինք, ինչպես նաև վերջիններիս հետ ազգակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք.

17) **մերձավոր ազգական**՝ ծնողը, զավակը, որդեգրողը, որդեգրվածը, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայրը կամ քույրը, պապը, տատը, թոռը, ամուսինը, ամուսնու ծնողը կամ զավակի ամուսինը:»:

**Հոդված 2.** Օրենքի 4-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ, 12-րդ և 13-րդ մասերով.

«11. Կրթական հաստատություն ընդունելության դեպքում ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը) ունի առաջնային իրավունք ընտրելու իր մանկահասակ երեխաների կրթատեսակը և ուսուցման լեզուն:

12.Կրթական հաստատություն ընդունելության դեպքում ազգային փոքրամասնության պատկանելիությունը որոշվում է ելնելով այն հանգամանքից, երբ սովորողի ծնողներից (նրա օրինական ներկայացուցիչներից) առնվազն մեկը ազգային փոքրամասնությանը պատկանող անձ է:

13.Սովորողի ծնողի (նրա օրինական ներկայացուցիչի) ազգային փոքրամասնությանը պատկանելիությունը սահմանել սովորողի ծնողի (նրա օրինական ներկայացուցիչի) նկատմամբ ընտանեկան հարաբերությունների մեջ գտնվող մերձավոր ազգականների և ազգականների ազգային պատկանելիության հիման վրա:»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1. Հոդված 1.** «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» 2021 թվականի հունվարի 19-ի ՀՕ-66-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 28-րդ հոդվածի 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 2. Օրենքը** լրացնել հետևյալ բովանդակությամբ 28.1-ին հոդվածով.

«**Հոդված 28.1. Երեխայի ազգության որոշումը**

1. Երեխայի ազգությունը որոշվում է ծնողի (ծնողների) ազգությանը համապատասխան, եթե երեխայի ծնողները ունեն միևնույն ազգությունը:

2. Երբ ծնողները տարբեր ազգություն ունեն, երեխան իր ազգությունը ընտրում է անձը հաստատող փաստաթուղթ կամ անձնագիր ստանալիս՝ հոր կամ մոր ազգություններին համապատասխան:»:

**Հոդված 3.** Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ի կետից հանել «, ինչպես նաև սույն օրենքով սահմանված կարգով՝ ազգությունը» բառերը:

**Հոդված 4.** Օրենքի 30-րդ հոդվածի 1-ի մասի 1-ի կետից հանել «, ազգությունը՝ ծննդյան ակտային գրանցմանը համապատասխան» բառերը:

**Հոդված 5.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

**Հոդված 5. Անձնագրի բովանդակությունը, ձևը, տրամադրելու (փոխանակելու) կարգը և ժամկետները, տրամադրելու (փոխանակելու) մերժման հիմքերը**

1. Անձնագիրը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է: Գտնված անձնագրերը Հայաստանի Հանրապետությունում ենթակա են հանձնման լիազոր մարմին, իսկ օտարերկրյա պետությունում՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ:

2. Անձնագրում հայերենով և անգլերենով ամրագրվում են քաղաքացու հետևյալ անձնական տվյալները.

1) ազգանունը, անունը, ինչպես նաև հայրանունը՝ միայն հայերեն տարբերակում.

2) ծննդյան վայրը (պետությունը կամ անձի ցանկությամբ մարզը կամ շրջանը կամ քաղաքը կամ ավանը կամ գյուղը՝ ծննդյան վկայականում համապատասխան նշումների առկայության դեպքում), օրը, ամիսը, տարեթիվը.

3) սեռը.

4) քաղաքացիությունը.

5) ազգությունը~~՝ քաղաքացու կամ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացուցչի ցանկությամբ.~~

6) բնակության վայրը (նշվում է միայն երկիրը).

7) մինչև 16 տարեկան երեխայի անձնագրում՝ ծնողների մասին տվյալները (անունը, ազգանունը, ազգությունը):

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ

### Հոդված 28. Ծննդյան ակտային գրանցման մեջ երեխայի մասին տեղեկություններ լրացնելու կարգը

1. Ծննդյան ակտային գրանցման մեջ երեխայի անունը, հայրանունը, ազգանունը՝

1) երեխայի անունը գրառվում է ըստ դիմումում նշված անվան.

2) երեխայի հայրանունը գրառվում է ըստ ծննդյան ակտային գրանցման մեջ երեխայի հայր գրառված անձի անվանման.

3) երեխայի ազգանունը գրառվում է նրա ծնողների ազգանվամբ: Ծնողների տարբեր ազգանունների առկայության դեպքում երեխայի ազգանունը գրառվում է ըստ դիմումում նշված ազգանվան.

4) ընկեցիկ կամ լքված երեխայի անունը, հայրանունը և ազգանունը գրառվում են ըստ դիմումում նշված անվան, հայրանվան և ազգանվան.

5) մահացած ծնված երեխայի ծննդի ակտային գրանցման մեջ երեխայի անունը, հայրանունը և ազգանունը գրառվում են ըստ երեխայի ծնողի (ծնողների)՝ դիմումում նշված անվան, հայրանվան և ազգանվան: Բժշկական հաստատության ներկայացրած դիմումի հիման վրա մահացած ծնված երեխայի ծննդյան ակտում երեխայի անունը և հայրանունը չեն գրառվում, ազգանունը գրառվում է երեխայի պերինատալ մահվան մասին սահմանված ձևի փաստաթղթում նշված երեխայի մայր հանդիսացող անձի ազգանվամբ:

2. Երեխայի ծննդյան ժամանակը և սեռը գրառվում են՝

1) բժշկական կազմակերպության տված՝ ծննդի մասին բժշկական փաստաթղթի մեջ նշված տվյալների համաձայն.

2) երեխայի ծննդյան փաստը հաստատող՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի մեջ նշված տվյալների համաձայն.

3) «Նոտարիատի մասին» օրենքով սահմանված կարգով նոտարի հաստատած իրավաբանական փաստի մասին նոտարական ակտում նշված տվյալների համաձայն.

4) բժշկական կազմակերպության կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի տված՝ երեխայի տարիքն ու սեռը հաստատող փաստաթղթում նշված տվյալների համաձայն:

3. Որպես երեխայի ծննդյան վայր՝ գրառվում է՝

1) երեխայի փաստացի ծննդյան վայրը կամ այն վայրը, որտեղ գտնվել է երեխան (մարզի, քաղաքային կամ գյուղական համայնքի անվանումը).

2) եթե երեխան ծնվել է տրանսպորտային միջոցում՝ ուղերթի ընթացքում, ապա այն վայրը, որի տարածքով ծննդյան պահին տեղաշարժվել է այդ տրանսպորտային միջոցը, բացառությամբ օդային և ջրային տրանսպորտի համար օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

~~4. Երեխայի ազգությունը գրառվում է՝~~

~~1) ծնողի (ծնողների) ազգությանը համապատասխան, եթե երեխայի ծնողները ունեն միևնույն ազգությունը.~~

~~2) դիմումում նշված ծնողներից մեկի ազգությամբ, եթե երեխայի ծնողները ունեն տարբեր ազգություն:~~

5. Ծննդյան ակտային գրանցման մեջ անհրաժեշտ այլ տեղեկությունները լրացվում են համաձայն դիմումի և դրան կից ներկայացվող այլ փաստաթղթերի հիման վրա:

**Հոդված 28.1. Երեխայի ազգության որոշումը**

1. Երեխայի ազգությունը որոշվում է ծնողի (ծնողների) ազգությանը համապատասխան, եթե երեխայի ծնողները ունեն միևնույն ազգությունը:

2. Երբ ծնողները տարբեր ազգություն ունեն, երեխան իր ազգությունը ընտրում է անձը հաստատող փաստաթուղթ կամ անձնագիր ստանալիս՝ հոր կամ մոր ազգություններին համապատասխան:

**Հոդված 29. Ծննդի ակտային գրանցման բովանդակությունը**

1. Ծննդի ակտային գրանցման մեջ լրացվում են հետևյալ տեղեկությունները.

1) երեխայի անունը, հայրանունը, ազգանունը, սեռը, ծննդյան վայրը և ժամանակը~~, ինչպես նաև սույն օրենքով սահմանված կարգով՝ ազգությունը.~~

2) ծնված երեխաների թիվը (մեկ, երկու կամ ավելի, կենդանածին կամ մեռելածին).

3) նորածինը մոր որերորդ երեխան է.

4) երեխայի ծննդի փաստը հաստատող փաստաթղթի տվյալները.

5) դիմողի համաձայնությամբ տրամադրված հանրային ծառայությունների համարանիշը.

6) ծնողների անունը, հայրանունը, ազգանունը, ինչպես նաև ծննդյան վայրը և ժամանակը, քաղաքացիությունը, բնակության վայրը, ըստ ցանկության՝ ազգությունը, աշխատանքի վայրը և կրթությունը.

7) հոր մասին տեղեկություններ լրացնելու համար հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները.

8) դիմող անձի անձնագրային տվյալները.

9) ծննդի ակտային գրանցման ժամանակը և համարը.

10) ծննդյան վկայականի սերիան և համարը.

11) երեխայի բնակության վայրը:

2. Անձի ծննդի ակտային գրանցման մեջ լրացվում են կյանքի ընթացքում այդ անձի վերաբերյալ կատարված բոլոր քաղաքացիական կացության ակտերի գրանցումների վերաբերյալ տեղեկությունները:

**Հոդված 30. Ծննդյան վկայականի բովանդակությունը**

1. Ծննդյան վկայականը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

1) երեխայի անունը, հայրանունը, ազգանունը, սեռը, ծննդյան վայրը և ժամանակը ~~, ազգությունը՝ ծննդյան ակտային գրանցմանը համապատասխան.~~

2) դիմողի համաձայնությամբ տրամադրված հանրային ծառայությունների համարանիշը.

3) ծնողների անունը, հայրանունը, ազգանունը և ազգությունը.

4) ծննդի ակտային գրանցման ժամանակը, համարը և գրանցումը.

5) ծննդյան վկայական տալու ժամանակը և տրամադրող մարմնի անվանումը:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

**Հոդված 4. Նույնականացման քարտի բովանդակությունը, ձևը, տրամադրելու (փոխանակելու) կարգը և ժամկետները, տրամադրելու (փոխանակելու) մերժման հիմքերը**

1. Նույնականացման քարտը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է: Գտնված նույնականացման քարտերը Հայաստանի Հանրապետությունում ենթակա են հանձնման լիազոր մարմին, իսկ օտարերկրյա պետությունում՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ:

2. Նույնականացման քարտում հայերենով և անգլերենով ամրագրվում են քաղաքացու հետևյալ անձնական տվյալները.

1) ազգանունը, անունը, ինչպես նաև հայրանունը՝ միայն հայերեն տարբերակում.

2) ծննդյան վայրը (պետությունը կամ անձի ցանկությամբ մարզը կամ շրջանը կամ քաղաքը կամ ավանը կամ գյուղը՝ ծննդյան վկայականում համապատասխան նշումների առկայության դեպքում), օրը, ամիսը, տարեթիվը.

3) սեռը.

4) քաղաքացիությունը.

5) ազգությունը~~՝ քաղաքացու կամ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացուցչի ցանկությամբ.~~

6) բնակության վայրը (նշվում է միայն երկիրը):

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԼՐԱՑՄԱՆ

**Հոդված 3. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **հանրակրթություն՝** անձի ուսուցման և դաստիարակության գործընթաց, որն իրականացվում է նախադպրոցական, տարրական, հիմնական, միջնակարգ կրթության հիմնական և լրացուցիչ ծրագրերով.

2) **տարրական կրթություն՝** պարտադիր կրթության առաջին մակարդակ, որը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին աստիճանը.

3) **հիմնական կրթություն՝** պարտադիր կրթության երկրորդ մակարդակ, որը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին և երկրորդ աստիճանները.

4) **միջնակարգ կրթություն՝** հանրակրթության երրորդ մակարդակ, որը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի երեք աստիճանները.

5) **հանրակրթության պետական չափորոշիչ՝** նորմատիվ փաստաթուղթ, որը, ըստ կրթական ծրագրի աստիճանների, սահմանում է սովորողների ուսումնական բեռնվածության նվազագույն և առավելագույն ծավալը, սովորողների գնահատման համակարգի սկզբունքները, ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները և հանրակրթական միջնակարգ կրթության ծրագրի շրջանավարտին ներկայացվող որակական պահանջները՝ կարողունակությունները (կոմպետենցիաները).

6) **հանրակրթական ծրագիր (հիմնական և լրացուցիչ)՝** առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների և ուսուցման կազմակերպման ձևերի ամբողջություն, որոնք ապահովում են հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված վերջնարդյունքներն ու կարողունակությունները.

6.1) **հեռավար (դիստանցիոն) կրթություն՝** կրթական ծրագրի իրականացման ձև, որի շրջանակներում անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և ուսուցչի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով, սակայն հիմնական հանրակրթական ծրագրերի կազմակերպման ընթացքում կարող է կիրառվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով՝ բացառիկ դեպքերում և որոշակի ժամկետով.

6.2) **կրեդիտային համակարգ՝** միջնակարգ կրթության ուսումնական գործընթացի կազմակերպման, սովորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ գնահատման, կրթական ծրագրերի յուրացման կրեդիտների միջոցով չափման, հաշվառման և փոխանցման համակարգ.

6.3) **այլընտրանքային ծրագիր՝** հանրակրթական ծրագրից ուսումնական պլանով, ուսուցման կազմակերպման ձևով և առարկայական ծրագրերով տարբերվող, հանրակրթական պետական չափորոշչի վերջնարդյունքներն ու կարողունակություններն ապահովող և օրենսդրությամբ սահմանված կարգով որպես այլընտրանքային երաշխավորված հանրակրթական ծրագիր:

Այլընտրանքային կրթական ծրագրերն են՝

ա. հեղինակային կրթական ծրագիր՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հեղինակած և օրենսդրությամբ սահմանված կարգով որպես հեղինակային երաշխավորված հանրակրթական ծրագիր,

բ. փորձարարական կրթական ծրագիր՝ սույն օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված կրթական աստիճանի առավելագույն տևողությամբ ներդրված հանրակրթական ծրագիր,

գ. միջազգային կրթական ծրագիր՝ միջազգային պայմանագրի հիման վրա կամ տասը և ավելի օտարերկրյա պետություններում իրականացվող հանրակրթական ծրագիր.

7) **հանրակրթական ուսումնական հաստատություն (այսուհետ՝ ուսումնական հաստատություն)՝** իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որն իրականացնում է հանրակրթական հիմնական ծրագիր(եր).

8) **հանրակրթական դպրոց՝** մեկ կամ մի քանի ընդհանուր, այդ թվում՝ հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցմամբ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության տեսակ.

9) **մասնագիտացված հանրակրթական դպրոց՝** ռազմագիտության, սպորտի, արհեստների, արվեստի կամ գիտության որևէ բնագավառում հանրակրթական հիմնական մասնագիտացված ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության տեսակ.

10) **հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոն՝** կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության, զարգացման ապահովման համար կրթական ծրագիր և աջակցություն իրականացնող մանկավարժահոգեբանական և այլ օժանդակող կրթական ծառայություններ մատուցող ուսումնական հաստատության տեսակ.

10.1) **կրթության առանձնահատուկ պայմաններ՝** անձի հանրակրթական հիմնական ծրագրի յուրացմանը նպատակաուղղված առարկայական ծրագրերի և ուսուցման մեթոդների, ուսուցման անհատական տեխնիկական միջոցների, հարմարեցված միջավայրի, ինչպես նաև մանկավարժական, սոցիալական և այլ ծառայությունների ամբողջություն.

10.2) **կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ՝** խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության և այլ խնդիրներով պայմանավորված՝ ուսուցման հետ կապված դժվարություններ ունեցող, ինչպես նաև բացառիկ ընդունակություններ ունեցող անձ, որին հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ, ներառյալ՝ խելամիտ հարմարեցումներ.

10.3) **ներառական կրթություն՝** յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովում.

10.4) **մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ՝** ուսումնամեթոդական, հոգեբանական և մանկավարժական

աջակցություն, որը ցուցաբերվում է սովորող երեխային, նրա ծնողին և մանկավարժական աշխատողին.

10.5) **երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում՝** անձի կրթական ծրագրերին մասնակցության դիտարկում, երեխայի զարգացման հնարավորությունների բացահայտում և կրթության առանձնահատուկ անհրաժեշտ պայմանների սահմանում.

10.6) **մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն՝** երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատող, կրթությանն աջակցող մանկավարժահոգեբանական և այլ օժանդակող ծառայություններ մատուցող կազմակերպություն.

10.7) ***(կետն ուժը կորցրել է 09.02.22 ՀՕ-35-Ն)***

10.8) **անհատական ուսուցման պլան՝** հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների, ծրագրերի և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված փաստաթուղթ, որը սահմանում է սովորողի կրթության կազմակերպման տարեկան նպատակը, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները (ներառյալ՝ աջակցող ծառայությունները).

10.9) **ուսուցչի օգնական՝** կրթության կազմակերպման գործընթացում ուսուցչին աջակցող մանկավարժական աշխատող.

10.10) **բացառիկ ընդունակություններ ունեցող (օժտված) անձ՝** կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ, որի ինտելեկտուալ, ստեղծագործական, սոցիալական և ֆիզիկական ներուժը կամ դրանցից մի քանիսը ակնհայտորեն միջինից բարձր են, որի հետևանքով անձն իր ներուժը լիարժեք զարգացնելու համար անհրաժեշտ խելամիտ հարմարեցումների (ծառայությունների, գործողությունների, միջոցների) կարիք ունի.

11) **բազմահամակազմ դասարան՝** տարբեր դասարանների առարկայական ծրագրեր յուրացնող սովորողներից բաղկացած ուսումնական խումբ.

12) **մանկավարժական աշխատող՝** սովորողների կողմից հանրակրթական ծրագրերի յուրացմանը նպաստող և (կամ) կրթության բովանդակության պահանջները ապահովող ուսումնական հաստատության, ինչպես նաև մանկավարժահոգեբանական կենտրոնների աշխատակից.

13) **ուսուցիչ՝** ուսումնական հաստատությունում սովորողների կողմից առարկայական ծրագրերի յուրացումը դասապրոցեսի միջոցով ապահովող և այդ գործընթացի համար անմիջականորեն պատասխանատու մանկավարժական աշխատող.

14) **ուսուցչի ատեստավորում՝** ուսուցչի գիտելիքների, աշխատանքային կարողությունների, հմտությունների՝ զբաղեցրած պաշտոնին համապատասխանության որոշման գործընթաց.

14.1) **ուսուցչի վերապատրաստում՝** վերապատրաստող կազմակերպություններում ուսուցչի կողմից կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած՝ ուսուցչի վերապատրաստման չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան մասնագիտական նոր գիտելիքների, հմտությունների և ունակությունների յուրացում ու կատարելագործում.

14.2) **տարակարգ՝** ուսուցչի մասնագիտական չափանիշներին համապատասխանող աստիճանակարգ.

14.3) **մասնագիտական չափանիշ**՝ ուսուցչի մասնագիտական զարգացման և գիտելիքների, աշխատանքային գործունեության, կարողությունների, պատասխանատվության նկարագիր.

14.4) **ուսումնադաստիարակչական գործառույթ**՝ հանրակրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատության վարչական և մանկավարժական աշխատողների կողմից իրականացվող ուսումնական և դաստիարակչական գործընթացների մշակմանը, կազմակերպմանը, իրականացմանը և համակարգմանն ուղղված աշխատանքներ.

14.5) **դասագիրք**՝ հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան՝ տվյալ հանրակրթական առարկայի կամ դրա մի մասի հիմնական բովանդակությամբ թղթային կամ էլեկտրոնային գիրք.

15) **դասագրքի փորձաքննություն**՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով հանրակրթության պետական չափորոշիչներին դասագրքի համապատասխանության գնահատման գործընթաց.

16) **ազգականներ**՝ ազգակցական կապի մեջ գտնվող և մինչև նախապապը կամ նախատատն ընդհանուր նախնիներ ունեցող անձինք: Սույն օրենքի իմաստով՝ անձի հետ ազգակցական կապի 1-ին աստիճանի մեջ են անձի զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները: Անձի հետ ազգակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ են ազգակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք, ինչպես նաև վերջիններիս հետ ազգակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք: Անձի հետ ազգակցական կապի մինչև 3-րդ աստիճանի մեջ են ազգակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ գտնվող անձինք, ինչպես նաև վերջիններիս հետ ազգակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք.

17) **մերձավոր ազգական**՝ ծնողը, զավակը, որդեգրողը, որդեգրվածը, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայրը կամ քույրը, պապը, տատը, թոռը, ամուսինը, ամուսնու ծնողը կամ զավակի ամուսինը:

**Հոդված 4. Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականությունը**

1. Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է հանրակրթության բնագավառի զարգացումը՝ որպես անհատի և հասարակության անվտանգության և կայուն զարգացման ապահովման, հայ ինքնության պահպանման կարևոր երաշխիք:

2. Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

2.1. Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

3. Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթը:

4. Միջնակարգ կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5. Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

6. Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է 12-ամյա միջնակարգ կրթություն:

7. Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է:

8. Ուսումնական հաստատություններում արգելվում է իրականացնել քաղաքական գործունեություն կամ քարոզչություն:

Կրոնական գործունեությունը և քարոզչությունն ուսումնական հաստատություններում արգելվում են, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

9. Հայաստանի Հանրապետությունում հանրակրթությունն իրականացվում է գրական հայերենով՝ «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

10. Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հանրակրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:

11. Կրթական հաստատություն ընդունելության դեպքում ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը) ունի առաջնային իրավունք ընտրելու իր մանկահասակ երեխաների կրթատեսակը և ուսուցման լեզուն:

12. Կրթական հաստատություն ընդունելության դեպքում ազգային փոքրամասնության պատկանելիությունը որոշվում է ելնելով այն հանգամանքից, երբ սովորողի ծնողներից (նրա օրինական ներկայացուցիչներից) առնվազն մեկը ազգային փոքրամասնությանը պատկանող անձ է:

13. Սովորողի ծնողի (նրա օրինական ներկայացուցիչ) ազգային փոքրամասնությանը պատկանելիությունը սահմանել սովորողի ծնողի (նրա օրինական ներկայացուցիչ) նկատմամբ ընտանեկան հարաբերությունների մեջ գտնվող մերձավոր ազգականների և ազգականների ազգային պատկանելիության հիման վրա:

# ՏԵՂԵԿԱՆՔ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1998 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 821 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐՎԱԾ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացու սույն որոշմամբ հաստատված անձնագիրը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում նրա անձը հաստատող հիմնական փաստաթուղթ է:

Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր կրողը գտնվում է Հայաստանի Հանրապետության հովանավորության ներքո:

Հայաստանի Հանրապետության քաղաքացին անձնագիր ստանում է կամավոր՝ անկախ տարիքից:

16 տարին չլրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր տրվում է ըստ ցանկության՝ մեկ ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա: Եթե ծնողը կամ օրինական ներկայացուցիչն անձամբ չի կարող ներկայացնել դիմումը, ապա ներկայացվող դիմումի վրա նրա ստորագրության իսկությունը վավերացվում է նոտարական կարգով: Դիմումը պետք է պարունակի երեխային անձնագիր տրամադրելու գործողության վերաբերյալ հստակ նշում, ինչպես նաև անձնագիր ստացող երեխայի անձնական տվյալները (անուն, ազգանուն, ծննդյան օր, ամիս, տարեթիվ):

Հայաստանի Հանրապետության՝ մինչև 16 տարեկան քաղաքացիներին Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր է տրվում առանց անձնագրում հաշվառման մասին նշում կատարելու:

Մինչև 6 տարեկան քաղաքացիներին անձնագիրը տրամադրվում է 3 տարի վավերականության ժամկետով, 6 տարեկանից մինչև 16 տարին լրացած քաղաքացիներին՝ 5 տարի վավերականության ժամկետով, իսկ 16 տարին լրացած քաղաքացիներին՝ 10 տարի վավերականության ժամկետով: Ընդ որում, մինչև 16 տարեկան, ինչպես նաև 16 տարին լրացած արական սեռի քաղաքացիներին անձնագրերը տրամադրվում են մինչև նրանց 19 տարին լրանալը, իսկ 19 տարին լրացած լինելու դեպքում՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով սահմանված կարգով տրված պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման կամ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կամ 8-րդ մասով կամ 29-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված բժշկական վերափորձաքննության ժամկետով: Պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության լիազոր պետական կառավարման համակարգի մարմնի ղեկավարի միջնորդությամբ 18 տարին լրացած արական սեռի քաղաքացիներին անձնագիր կարող է տրամադրվել նաև այլ ժամկետով՝ ուսման, բուժման, մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցելու նպատակով:

16 տարին չլրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացու՝ մինչև 16 տարին լրանալը տրված անձնագիրը կարող է փոխանակվել նրա մեկ ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա՝ նախքան անձնագրի վավերականության ժամկետը լրանալը:

Մինչև 16 տարեկան անչափահասների անձնագրերի 5-րդ էջի «Նշումներ» բաժնում անգլերենով կատարվում է ծնողների մասին տվյալների (անունը, ազգանունը, *ազգությունը*) գրառում: Ծնողների մահացած կամ օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող ճանաչված լինելու դեպքում անձնագրերի 5-րդ էջի «Նշումներ» բաժնում գրառումներ չեն կատարվում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրով փաստաթղթավորված արական սեռի 15 տարին լրացած անձանց մասին տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, ծնողների հաշվառման վայրը) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ փոխանցվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատ:

6. Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրում կարող են կատարվել հետևյալ նշումները՝

ա) *(ենթակետն ուժը կորցրել է 20.07.17 N 867-Ն)*

բ) *(ենթակետն ուժը կորցրել է 22.09.23 N 1604-Ն)*

դ) *(ենթակետն ուժը կորցրել է 29.09.16  N 987-Ն)*

ե) օտարերկրյա պետություններ մեկնելու և վերադառնալու մասին ազգային անվտանգության մարմինների կողմից.

զ) ազգության մասին՝ ~~Հայաստանի Հանրապետության քաղաքացու ցանկությամբ՝ Հայաստանի Հանրապետությունում լիազոր մարմնի, իսկ օտարերկրյա պետություններում՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների կողմից.~~